ԱՆԱՀԻՏ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ
Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ,
գիտությունների թեկնածու, դոցենտ
ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ,
իտալերեն լեզու և գրականության բաժնի ասպիրանտ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ Ս. ՖԻՑԶԵՐԱԼԴԻ «ԳԻՇԵՐՆ ԱՆՈՒՅՇ Է» ՎԵՊՈՒՄ

«Գիշերն անույշ է» Ֆիցջերալդիի ամենաազդեցիկ և խորը գործերից է: Իր հերոսին՝ Դիքին, նկարագրում է տաղանդավոր, խելացի և լի հոգևոր հարստությամբ, սակայն նրան չի կարողանում ետ պահել անկումից: Ամուսնանալով «շատ հարուստ աշխարհի» ներկայացուցչի հետ՝ Դիքի հոգևոր աշխարհը անկում է ապրում: Բժշկի անկումը, ողբերգությունը – ողբերգություն է անձնական, բայց միաժամանակ սոցիալական: Դա մեղադրական ակտ է «շատ հարուստներին» և դատավճիռ բուրժուական Ամերիկայի համար, որը նրանց ձեռքներին է տվել իշխանությունը և որն էլ նրանց անձեռնամխելի է դարձնում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ամերիկյան երազանք, անկում,սեր, ողբերգություն, բաժանում:

Ֆրանսիս Սկոտ Ֆիցջերալդին, լինելով «Ջազային դարաշրջան» ի հեղինակներից նշենք, որ ծնվել է Սեպտմերերի 24-ին, 1896 թ-ին, իռլանդական կաթոլիկ ընտանիքում: Իր անունը ոչ հարազատ ապուպապի անվամբ են կնքել, ով ԱՄՆ-ի հիմնի տեքստի հեղինակն է: Իր «Գիշերն անույշ է» վեպը նա 1933 թ-ի աշնանն է ավարտում: 1934 ի հունվարից այն մաս մաս լույս է տեսնում: Մեզ կարող է թվալ, որ այնտեղ չկան սոցիալական խնդիրներ, որ կոմպոզիցիան ամբողջական չէ: Բայց, իհարկե, չենք կարող ասել, որ «Ամերիկյան երազանքի» գաղափարը ամբողջովին դուրս է մղված: Իսկ ինչ է «Ամերիկյան երազանքը»:

Այս արտահայտությունը հաճախ օգտագործվում է նշելու համար ամերիկացիների կյանքի իդեալները, ինչպես նյութական (մատերիալ) առումով այնպես էլ հոգևոր: «Ամերիկյան երազանքը» հնարավորությունների կամ ազատության իդեալն է:

«Ամերիկյան երազանքը» մի երկրի մասին է, որտեղ յուրաքանչյուր մարդու կյանքը ավելի լավ է լինելու, հարուստ, որտեղ յուրաքանչյուրը իրավունք կունենա ստանա այն, ինչին արժանի է: Որտեղ յուրաքանչյուր ոք կարող է ունենալ այն, ինչ ցանկանում է, կարող է ձեռք բերել այն, ինչը երկար ժամանակ անհասանելի է եղել իրեն (J. Adams 1931, 6):

«Գիշերն անույշ է» Ֆիցջերալդիի ամենաազդեցիկ և խորը գործերից է: Այս գործը նրա ժամանակակիցները սկզբում այդքան էլ բարձր չէին դասում, բայց հետագայում այն վերելք է ապրում: Վեպի գործողությունները, (եթե հաշվի չառնենք հերոսների ճանապարհորդությունները դեպի անցյալ), վերաբերվում է 20-ականների 2 կեսին, այսինքն՝«Ջազային դարաշրջանին»: Այն ծավալվում է Ֆրանսիայում, Շվեցիարիայում, Իտալիայում ու հենց այն վայրերում, որտեղ ապրել է Ֆիցջերալդին, իր՝ Եվրոպայում գտնվելու տարիներին: Հոգեբանական մատերիաները և հերոսի հետ կապված բոլոր մասնագիտական գործունեությունները, անխոս, հեղինակի փորձի արդյունքն է, այն կապված է կնոջ հի-

վանդութան հետ և եվրապական կլի-նիկաներում բուժումների՝ Շվեցարիա-յում, հիմնականում Գերմանիայում (J. Chamberlain 1934, 2):

Վեպում նկարագրված Դիկ Դայվերի տրագիկ պատմությունը ուղղակիորեն կապ ունի Ֆիցջերալդի ստեղծագործա-կան ճակատագրի և դառը խոհերի հետ: Դրա մասին նա ինքն է գրել իր հոդված-ներում: Վեպի վերջին հատվածը, կոմ-պոզիցիոն և կառուցվածքային առումն-րով, իրականապես կիսատ է, թերի (պատահակն չէ, որ Ֆիցջերալդին մտա-դիր էր վերակառուցել այն մինչև իր մա-հը, և սկսել էր արդեն, սակայն չհասցրեց վերջացնել):

Ֆ. Ս. Ֆիցջերալդի կյանքի սեփական փորձը միայն մատերաին է վեպի, բայց ոչ թե դրա իմաստը:

«Գիշերն անույշ է» բազմակողմանի, բազմաշերտ և բարդ ստեղծագործու-թյուն է: Նրանում կան բազմաթիվ կեր-պարներ: Նրացից մի քանիսը ապրում են վեպի սկզբից մինչև վերջ: Մյուսները հայտնվում են էպիզոդային, այնուհետև կամ հեռանում են վեպից մեկընդմիշտ կամ էլ ժամանակավորապես: Գիրքը լի է սյուժետային մասերով, երբեմն հեղի-անակի նահանջով:

Կերպարների և իրադարձությունների դինամիկան վեպում հիմնվում է երկու հակադիր էլեմենտների համագործակ-ցությամբ, միմյանիցից սահմանազատ-ված տնտեսական, սոցիալական և բա-րոյական հատկություններով: Դրանից մեկը լիարժեք մարմնավորված է Դիքի կերպարում, ում հեղիանակը օժտել է ստեղծագործական ունակությամբ, մար-դասիրությամբ և բնածին դեմոկրատիզ-մով: Մյուսը արդեն նկարագրված է Ուո-ռենների գերդաստանում: Վեպում կան այլ հերոսներ նույնպես, բայց նրանք այսպես թե այնպես խմբվում են Դայվեր-ների և Ուորենների շուրջը: Ուորենները իրենց շրջապատում մեծ և կարևոր դեր ունեն – դա սոցիալական միջավայրն է, որտեղ կա հերոս, և միաժամանակ ուժ, որը կործանում է նրան: Գրքի սյուժեն Դիքի անկմամբ է զարգանում:

Ուորենները «Շատ հարուստ մարդիկ են»: Նրանց բնութագրված է մեծամտու-թյան զգացումը, կյանքի և մարդկանց հանդեպ պահանջկոտ վերաբերմունք և հոգևոր դատարկություն: «Գիշերն անույշ է» ներկայացնում է գեղարվես-տական ուսումնասիրություն «շատ հա-րուստ մարդկանց», որում երևան է գա-լիս նրանց աշխարհի բարոյականության և հոգեբանության ուսումնասիրությունը:

«Շատ հարուստ մարդիկ» – տերմին է, որը մտցրել է Ֆիցջերալդին: Այն ավելի լայն իմաստ ունի, քան ուղիղ իմաստը: Դրանք պարտադիր այն մարդիկ չեն, ովքեր շատ փող ունեն: Ֆիցջերալդիի հերոսների մեջ կան այնպիսները, ով-քեր միքիչ փող ունեն և նրանք նույնիկս աշխատում են, բայց այնուամենայնիվ պատկանում են «շատ հարուստ» մարդ-կանց խավին (*Р. Лысцев, 2008, 3):*

Իր պատմվածքներից մեկում՝ «Երի-տասարդ հարուստ մարդը» Ֆիցջե-ռալդին ասում է, որ հարուստները մեզ նման չեն: Տիրապետելը և հաճույքը տր-ված են նրանց, և դրանից նրանց մոտ մի բան է սկսում կատարվել, նրանք զի-ջող չեն դառնում այնտեղ, որտեղ մենք կարող ենք, ցինիկ են այնտեղ, որտեղ մենք դյուրահավատ ենք, և հասկանալ, թե ինչպես են նրանք ապրում մեզ հաս-կանալ դժվար կլինի, եթե հարուստ չես ծնվել: Հոգու խորքում նրանք մտածում են, որ մեզնից լավն են: Նույնիսկ եթե մեր աշխարհ են մտնում, միևնույն է նրանք մտածում են, որ մեզնից լավն են, նրանք մեզ պես չեն: Այստեղից կարելի է եզրակացնել, որ «հարուստ մարդը»-սոցիալ-հոգեբանական տիպն է, որոնք առաջանում են երկու երեք սերունդնե-րի հարուստների ընտանիքում: Կարելի է ասել, որ Ֆիցջերալդիի «շատ հարուստ մարդիկ»- ժառանգական արիստոկրա-տիայի դոլլարն է:(J. Adams 1931, 3):

Այդ ժամանակաշրջանը համընկավ դաժան ժամանակների հետ – մասսա-

յական գործազրկություն, բանկրոտ: Այդ ժամանակ շատերն էին հոդվածներ գրում, իսկ մի մասն էլ չէր մասնակցում և դրանց թվին է դասվում Ֆիցջերալդին, նա իրեն փորձում էր հեռու պահել, բայց միևնույն ժամանակ այդ ամենը նրա մտածելակերպի և վերաբերմունքի վրա է ազդում:

Ուորենները շատ հարուստ մարդկանց աշխարհից են – մտնել նրանց մեջ, նրանց շրջանակներ և չպատկանել նրանց աշխարհին կնշանակի կործանում, ինչպես Դիքի մոտ եղավ:

Այդ փայլուն, գեղեցիկ, թվացյալ էներգիայով և դինամիկ պայծառ աշխարհը, խաբուսիկ է, իրականում ինչպես Ֆիցջերալդին է ցույց տալիս – այն աղքատ է, անբուժելի հիվանդ: Նրանք ոչինչ չունեն բացի փողից: Նրանց բնութագրում է լիովին հոգևորի բացակայությամբ, մտավոր թուլությամբ և բարոյական այլասերմամբ: Միակ բացառությունը կարելի է ասել Նիքոլն է, ով էլ, սակայն, հիվանդ էր, հետո նոր նրանց հավասարվեց, երբ արդեն ինքը բուժվեց, իսկ Դիքը կործանվեց: Ուորենների աշխարհը միայնակ ոչինչ չի կարող անել, նույնիսկ ուրախանալ:

Բժիշկ Դայվերը – գրավիչ հետաքրքիր կերպար է: Ֆիցջերալդին նրան խելքով, խարիզմատիկ, տաղանդավոր, առնական և հոգևոր հարստությամբ է նկարագրում: Բնույթով նա մտածող, գիտակ, ստեղծող է: Նա ազնիվ ծառայում է մարդկանց և բնությանը: Հոգեբանության ոլորտում – մասնագետ է՝ չնայած երիտասարդ տարիքի արդեն հասցրել է ձեռք բերել հեղինակություն գիտական աշխարհում: Նա շատ չի վաստակում, բայց չի ընկճվում, քանզի նրա պահանջներն էլ համեստ են: Նրա միտքը զբաղված է խնդիրներով, որը ոչ մի կապ չունի փողի հետ:

Երբ Դիքը ցյուրիխ հասավ երգանքներով, իղձերով, խոհերով լի էր: Դրանք ուժի, առողջության և մարդկանց բարություն անելու իղձերն էին, մի մաբողջ ազգի իղձեր: Դիք Դայվերի աշխարհը թեկուզ կարճ ժամանակով թափանցելը նշանակալից փորձություն էր այն մարդկանց համար, որոնց թվում էր, թե նա, հաշվի առնելով յուրաքանչյուրի արժանիքներն ու կոչումը, առանձնացնում էր իրենց ամբոխից: Նա անմիջապես շահում էր բոլորին իր բացարձակ ուշադրությամբ ու քաղաքավարությամբ՝ այնքան անմիջական, այնքան ինքնաբուխ, որ միայն արդյունքն էր առկա:

Չնայած Դայվերները ներքուստ անտարբեր էին աշխարհիկ կյանքի օրենքների նկատմամբ, բայց խորաթափանց լինելով՝ չէին խուսափում նրա ժամանակակից ռիթմից ու զարկից: Դիքի հավաքույթներն ձանձրալի չէին: Այդ երեկույթների ժամանակ բոլորին զարմացնում էր Դիքի ոգևորությունը և անձնուրացությունը, ինչպես նաև նրա կարողությունը՝ հուզելու զանազան մարդկանց, որոնցից յուրաքանչյուրը այնպիսի կախյալ վիճակում էր նրանից, ինչպես հետևակային ջոկատը՝ խոհարարից, և պարզվում էր, որ այդ ամենը Դիքին հաջողվում էր հեշտությամբ, առանց ճիգի, և որ Դիքը դեռևս ուներ ներքին հարստության անսահման պաշարներ յուրաքանչյուրի համար, ով իր կարիքը կզգար:

Նիկոլն ու Դիքը սիրով են ամուսնանում՝ անտեսելով բժշկական էթիկան՝ արգելող բժշկին ամուսնանալ հիվանդի հետ: Նա ազնիվ մտադրություններ ուներ և իհարկե ցանկանում էր բուժել Նիքոլին: Նրան թվում էր, որ միլիոններ ունեցողի հետ ամուսնանալը չի խանգարի իրեն պահպանել անկախությունը, շարունակել մասնագիտական գործունեությունը: Բայց դա միայն թվում էր: Ուորենները թույլատրելով նրան ամուսնանալ Նիքոլի հետ իրենց սեփական նպատակներն ունեին: «Գոյության համար հոր մղած պայքարը՝ եկեղեցական աղքատ թեմերում, սովորեցրել էր նրան սիրել փողը, չնայած բնությունից նա ընչաքաղց չէր: Դա ոտքի վրա

ամուր կանգնելու անհրաժեշտությունը չէր. բայց և այնպես երբեք այդքան ինքնավստահ չէր եղել, երբեք իրեն այդքան անկախ չէր զգացել, ինչպես այն ժամանակ, երբ ամուսնացավ Նիքոլի հետ: Սակայն նրան վարձովի պարընկոջ նման կուլ տվեցին, և ինքը ինչ-որ կերպ թույլ տվեց, որ իր ողջ զինանոցը պահ տրվի Ուորրենյան սեյֆերում» (Ս. Ֆիցջերալդ 2015, 153):

Նրանք, այսպես ասաց գնեցին Դայվերին, և ոչ էլ գաղտնի պահեցին այդ նրանից: Այս պահից սկվում է Դիքի դեկրադացիան – քայքայումը գիտնականից, նա մարդկությանը ծառայում էր ազնվորեն, ուներ ազնիվ իդեալներ և գաղափարներ – նա կամանց կամանց վերածվում է անձնական բժշկի, կնոջ սեփական դայակի: Ամեն բան հեշտ չէ: Դիքը սիրում է Նիքոլին և դեռ բեռ չէ նրա համար: Ճիշտ է Ուորենները հաճելի են, բայց այդ ամենը համեմատելի չէ այն ամենի հետ, ինչ նա կորցնում է: Նա կորցնում է իր տաղանդը, մասնագիտական հմտությունները, որակավորումը, հոգեկան էներգիան, սթափ մտածողությունը, հետաքրքրությունը կյանքի և մարդկանց հանդեպ (*Р. Лысцев 2008, 2):*

Թերևս ամենասարսափելին վերածննդի վտանգն է կախված Դիքի վրա, որը տանում է դեպի Ուորենների աշխարհը՝ սկզբում անձի փլուզում, կորցրած նպատակ և գոյության իմաստ: Պահ է գալիս, երբ նա այլևս պետք չէ Նիքոլին:

Բժշկի ողբերգությունը, անկումը – ողբերգություն է անձնական, բայց միաժամանակ սոցիալական: Դա մեղադրական ակտ է «շատ հարոստներին» և դատավճիռ բուրժուական Ամերիկայի համար, ովքեր անձեռնամխելի են դարձել իշխանության շնորհիվ:

Գրքի սկզբնական հատվածում տեսնում ենք, որ մեր հերոսները անընդմեջ նամակագրական կապի մեջ են լինում:

Նամակները բաժանվում էին երկու խմբի. առաջինը, նկատելիորեն հիվանդագին բնույթի էր, իսկ երկրորդը միանգամայն առողջ, հասունացող, հարուստ խառնվածքի տեր մարդու նամակներ էին:

Նիքոլը համարյա միշտ խոսում էր տղամարդկանց մասին, որոնք պա՛տրաստվում էին հարձակվել վրան, իր ճանաչած տղամարդկանց, կամ էլ անծանոթ:

Նիքոլի քույրը այդքան էլ կողմ չէր նրանց ամուսնությանը քանզի Նիքոլն շատ փող ուներ, իսկ Դիքը քահանայի որդի էր և բժիշկ: Բայց մյուս կողմից դա ձեռնտու գործարք էր, քանզի նա ցանկանում էր իր քրոջ կողքին մի խնամակալ լիներ, նա ամուսնանար բժշկի հետ, ով կխնամեր նրան: Այդպես էլ եղավ:

Նրանք ամուսնանում են: Որոշ ժամանակ ապրում են երջանիկ: Նիքոլը դեռ ընդունում էր դեղերը և սուր նոպաներ չէր ունեցել: Երբ ընկերներով ծովափում են լինում, հեռվից նկատում են մի կնոջ և մի աղջկա՝ Ռոզմարիին և իր մորը: Ռոզմարին մոր հետ Ֆրանսիա էր եկել հանգստանալու: Այդտեղ էին Նիքոլն ու իրենց շրջապատող մարդիկ: Սակայն այդ պահին Դայվերներն իրենցից ներկայացնում էին մի ամբողջ դասակարգի արտաքին էվոլուցիոն զարգացման գագաթնակետ, այնպես որ մարդկանց մեծամասնությունը նրանց կողքին թվում էր կորցնում էին իրենց դիրքն: Ծանոթանում են, Ռոզմարին սիրահարվում է Դիքին: Այդ ժամանակ Դիքը դեռ մեծ ազդեցություն ուներ մարդկանց վրա: Նրան շատ էին սիրում: Նա դեռ չէր ձանձրացել և կործանման ճանապարհը չէր բռնել: Ամբողջ տարիների ընթացքում նա կնոջ համար բացի ամուսին լինելուց, լինում է նաև բժիշկ, ով հետաքրքրություն ուներ այդ հիվանդության նկատմամաբ, և միևնույն ժամանակ սիրում էր Նիքոլին: Մի երեկույթի ժամանակ Նիքոլի նոպան բռնվում է; Այդտեղից սկսվում է նրանց հարաբերությունների խախտումը՝ քանի որ արդեն Ռոզմարին էր հայտնվել: Դիքի հոգեվիճակը հետզհետ փոխվում

է: Նիքոլը ի վերջո բուժվում է, սակայն կործանվում է Դիքը:

Ռոզմարին երիտասարդ էր՝ 18 տարեկան նա հիանում էր պարզապես Դիքով: Սակայն նրանք հեռացան, Դայվերները իրենց բնականոն կյանքով էին ապրում: Դիքը Ֆրանցի հետ որոշում է հիվանդանոց բացել: Նա օգտագործում է Նիքոլի փողերը, իհարկե Նիքոլը դեմ չէր: Բայց նա արդեն իսկ իր անկումն էր ապրում: Նա սկսել էր խմիչք օգտագործել, և դա նույնիսկ նկատել էին հիվանդները: Դիքը հաճախ էր սկսել խմել և կորցնել իրեն: Եվ մի անգամ տաքսի նստելիս, քանի որ վարորդը իրեն իր ցանկացած գումարով չտարավ, վեճի բռնվեց նրա հետ, հետո հարվածեց ոստիկանին, թեպետ չգիտեր, որ նա ոստիկան է և այդպես նրան ձեռբակալեցին: Բազում վեճերից և քաշքշուքներից հետո Բեյբին ազատեց Դիքին:

Բեյբին գոհունակության այն զգացումն ուներ, որ ինչքան էլ անթերի եղած լիներ Դիքի անցյալը, ապա այժմ նրա վրա բարոյական գերակշռություն կունենային այնքան ժամանակ, որքան նա պետք կգար իրենց:

Հոր մահվան լուրն լսելուց անմիջապես հետո մեկնում է Դիքը և երբ վերադառնում է տուն նրա և Նիքոլի հարաբերություններում արդեն նկատելի է դառնում սառնությունը:

«Նիքոլը Դիքին հարցրեց, թե արդյոք հիմա նրան շատ է սիրում: Իրականում սակայն Դիքը հեռացել էր նրանից ինքն իրեն փրկելու և սկսեց մտածել այդ մասին: Նա կորցրել էր իրեն՝ չիմանալով, թե երբ, որ ժամին, որ օրը, որ ամիս, որ տարին: Մի ժամանակ նա կարողանում էր հասկանալ իրերի էությունը, լուծել կյանքի ամենաբարդ հավասարումները, ինչպես որ ամենապարզ հիվանդների ամենապարզ հիվանդությունները: Բայց այդ տարիների ընթացքում՝ սկսած Նիքոլին Ցյուգերսիի ափին առաջին անգամ տեսնելուց մինչև Ռոզմարիի հետ ծանոթանալը, նրա այդ ընդունակությունը աստիճանաբար բթացել էր» (Ս. Ֆիցջերալդ, 2015, 300):

Նիքոլի երկար հիվանդության ընթացքում՝ ոչ իբրև բժիշկ, այլ իբրև մարդ, անցնելով ահավոր ճգնաժամերի միջով, Թոփսիի՝ իրենց երկրորդ երեխայի ծննդից հետո, Դիքն գոտեպնդել էր՝ մեկընդմիշտ տարբերելով հիվանդ Նիքոլին առողջ Նիքոլից: Սակայն առավել դժվար էր զանազանել բժշկի մասնագիտական օտարացումը իր սրտում ծագած նոր սառնությունից: Երբ առաջացած անտարբերությունը փայփայում են կամ անուշադրության մատնում, այն վերածվում է դատարկության, այս առումով էլ Դիքը սովորել էր դատարկվել Նիքոլից, կատարելով իր պարտքը նրա հանդեպ կամքին հակառակ, անզգացմունք ու անկիրք:

Ասում են, նման վերքերը մասամբ բուժվում են, սա մի անխոհեմ համեմատություն է մաշկի սպիների բուժման հետ, բայց կյանքում այդպես չի լինում: Այդ վերքերը փոքրանում են, դառնում գնդասեղի գլխիկի չափ ու երբեք չեն փակվում: Կրած տառապանքի հետքը ավելի շուտ կարելի է համեմատել մատի կամ աչքի կորստի հետ: Գուցե տարվա մեջ մեկ անգամ հիշենք այդ, բայց եթե հիշենք, միևնույն է, փրկություն չկա (Ս. Ֆիցջերալդ 2015, 332):

Դիքը փորձեց կյանքը մասնատել փոքր կտորների, դրանք որպես պաշար պահելու, գիտակցելով, որ ամբողջական կյանքը կարող է տարբեր լինել իր իսկ մասերից, և, բացի այդ, քառասունի մոտ մարդը հնարավոր չի գտնում դիտել այն ամբողջությամբ: Նրա սերը Նիքոլի և Ռոզմարիի հանդեպ, նրա բարեկամությունը Էյբ Նորթի և Թոմմի Բարբանի հետ հետպատերազմյան կործանված աշխարհում – նման մտերիմ հարաբերությունների մեջ մարդիկ այնքան են մերձեցել քեզ, որ կարծես ձուլվելով նրանց՝ դարձել են մի նոր անձ:

Դիքն արդեն երկար ժամանակ է, ինչ օգտագործում է ալկոհոլ և իր հիվան-

դերն են նույնիսկ դա նկատել: Երեխաներն էին, որ իմաստավորում էին այդ ժամանակահատվածը: Նույնիսկ Նիքոլն էր զգում այդ ներքին փոփոխությունը Դիքի մոտ: Նրանց հարաբերություններում սառը հոսանքն էր մուտք գործել և երկուսն էլ դա տեսնում էին և հասկանում:

–Այսպես շարունակել չի լինի,– սկսեց Նիքոլը:– Դու համաձայն չես ինձ հետ:

Դիքը չժխտեց նրա ասածը, և դրանից ցնցված Նիքոլը ավելացրեց.

–Երբեմն ինձ թվում է, որ ես քեզ կործանեցի:

–Ուրեմն դու ինձ համարում ես կործանված,– բարեհամբույր հարցրեց Դիքը:

– Ես դա նկատի չունեի: Բայց առաջ դու ինչ-որ բան ստեղծելու ցանկություն ունեիր, իսկ հիմա՝ կործանելու (Ս. Ֆիցջերալդ, 2015, 390):

Նիքոլը սոսկաց իր այդ ընդհանրացնող քննադատական խոսքերից, բայց Դիքի համառ լռությունը նրան ավելի վախեցրեց: Նիքոլը գուշակում էր, որ այդ լռության, այդ դաժան կապույտ աչքերի, երեխաների հանդեպ այդ անսովոր հետաքրքրության ետևում ինչ-որ բան էր կատարվում: Նրան ոչ հատուկ բարկության նոպաները զարմացնում էին Նիքոլին: Դիքը հանկարծ երկար մեղադրական էր կարդում ինչ-որ մեկի, ազգի, ապրելակերպի, մտածելակերպի հասցեին: Կարծես նրա ներաշխարհում անհասկանալի խոռվք կար, որի մասին կարելի էր գուշակել միայն այն ժամանակ, երբ այն մակերես էր ելնում:

Թոմմի Բարբանի հետ Դիքն էր ծանոթացրել Նիքոլին: Եվ կարծես նրանց հարաբերություններում փոփոխություն է նկատվում, թեպետ Դիքը դեմ չի էլ լինում կարծես: Թոմին Նիքոլին դուր էր գալիս: Բայց մի շաբաթ հետո Նիքոլը մոռացավ Թոմիի հանդեպ ունեցած իր հրապուրանքը: Նա վատ հիշողություն ուներ մարդկանց հարցում և հեշտությամբ էր մոռանում նրանց: Սակայն կրկին նամակ են ստանում Թոմիից, որ նա վերադառնում է: Նրանց մեջ սեր է ծնվում և դա վերջնականապես կործանում է Դայվերների ամուսնությունը, նրանց միատեղ կյանքը: Նրանք երեքով միասին սրճարանում զրուցում են: Թոմին ասում է Դիքին, որ Նիքոլն այլևս նրան չի սիրում և լքելու է նրան: Նրանք պատրաստվում են միասին լինել: Ի զարմանս Թոմի և Նիքոլի, Դիքը չի վիճում նրանց հետ: Դիքը արդեն կորցրել էր ամեն բան: Մարել էին նրա հետաքրքրությունները, զգացմունքները, կյանքի հանդեպ ունեցած հաճույքը: Ռոզմարին էլ նրա կողքին չէր, նա էլ էր ապրում իր կյանքով: Դիքը հեռանում է և նրան այլևս ոչ ոք չի տեսնում: Դիքը վերջնականապես կործանվում է՝ բուժելով կնոջը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. James Truslow Adams, The Epic of America, New York,1931
2. Tender Is the Night by John Chamberlain, New York, 1934
3. Роман Лысцев, Статья по роману Ночь Нежна Ф. С. Фицджеральда, 2008
4. Ս. Ֆիցջերալդ «Գիշերն անույշ է», 2015:

ИДЕЯ АМЕРИКАНСКОЙ МЕЧТЫ В РОМАНЕ С. ФИЦДЖЕРАЛЬДА “НОЧЬ НЕЖНА”

АНАИТ ШАХМУРАДЯН

Доцент факультета романо-германской филологии, кандидат филологических наук

АННА АРУТЮНЯН

Аспирант отделения итальянского языка и литературы факультета романо-германской филологии

Произведение «Ночь нежна» С. Фицджеральда является одной из самых мощных и глубоких его работ. Своего героя Дика автор представляет читателю талантливым, умным и полным духовного богатства, который, однако, духовно деградировал. Женившись на представительнице «очень богатого мира», Дик испытывает упадок духовного мира. Трагедия доктора личная и одновременно социальная. Это обвинение «очень богатым» и вердикт для буржуазной Америки, которая дала им власть и сделала их неприкосновенными.

IDEA OF THE AMERICAN DREAM IN F. SCOTT FITZGERALD’S NOVEL “TENDER IS THE NIGHT”

ANAHIT SHAHMURADYAN

PhD, Associate Professor of the Romance Germanic Philology Faculty, YSU

ANNA HARUTYUNYAN

Post graduate Student of the Spanish Language and Literature Division, Romance Germanic Faculty, YSU

The novel “Tender Is the Night” is one of the most prominent works of F. Scott Fitzgerald. He described his hero Dick as a smart, talented and a person full of spiritual richness, but who was unable to prevent himself from moral degradation. Doctor’s tragedy is not only personal, but also social. The American son of a clergyman who is on the way to becoming a renowned psychologist when he falls in love with Nicole and marries her. Dick is extraordinarily charismatic and graceful at the start of the novel, but eventually falls to his ruin.